

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Գ. Ա. ՇՈՒՌՄՊՅ-Ի

ՖԻԼՈՍՈՖԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

II

Մեր առաջին յօդածում հայերէնագիտութեան յառաջդիմութեան մասին, մենք տեսութիւն արինք 19-րդ դարուց առաջ եղած նշանաւորագոյն հայկաբաններին:

Մեր այդ գործը ղժւարին չէր՝ շնորհիւ այդ գիտնականների փոքր թւին. և նա աւելի ծանր չէր լինիլ եթէ մենք կամենայինք զբաղել հայ հայկաբաններով:

Վիկտոր Լանգլուան իւր «Հայաստանի հին և նոր պատմագիրների ժողովածուի» (Collection des historiens anciens et modernes de l'Arménie) յառաջաբանում ասում է՝ «հայոց գրականութիւնը, որ քրիստոնէական Արեւելքի ամենաբեղմնաւորներից մէկն է, սկսել է լրջօրէն գնահատուել Եւրոպայում միմիայն կէս դարուց դէս: Մինչ այն ժամանակ Վիլլօտի և Լա Կրոզի փորձերը 17-րդ դարում և բոլոր դր Վիլլֆորտի, Շրօդէրի և Վիստոն եղբայրների փորձերը 18-րդ դարում անսլոտող էին մնացել: Պէտք է հասնել մինչ 18-րդ դարու կէսի մօտերը՝ որ հանդիպենք հուշակաւոր Մխիթար Սեբաստացու ջանքերին, որ նա արաւ ազգային գրականութեան վերածնութեան նպատակով: Շնորհիւ այդ հանձարեղ մարդուն՝ հայոց գրականութիւնը կէս դարուց դէս սկսել է կրկին ձեռք բերել իւր նախկին փայլը և երբ ես այժմ գրում եմ (1868 թւական) Յունաստանի հուշակաւոր աքսորւածի ուսած զարկից առաջացած մեծ շարժումը ամենեւին չի դադարում: Վենետիկ, Կ. Պոլիս, Վիեննա, Պարիզ, Սանկտ-Պետերբուրգ, Մոսկաւ, Թիֆլիս, Երուսաղէմ՝ կենդանի

ներն են այդ մտաւոր շարժման, որը ամեն օր աւելի մեծ ծաւալ է ստանում և գուշակում հայկի աղգի գրականութեան համար աւելի լաւ օրեր և նոր ապագայ:

Մենք սկսում ենք այս ուսումնասիրութիւնը Ֆրանսիայից, բայց ոչ մեր ազգային համակրութիւնների պատճառով, այլ որովհետեւ մեր երկրին (Ֆրանսիային) է պատկանում հայկաբանութեանը այս դարում առաջին զարկը տւած լինելու արժանիքը: Այդ արժանիքը վիայւած է ամեն կողմից՝ պր. պրոֆ. Զ. Հիւրշման, Ստրաուբուրգի համալսարանից, այդ մեր արժանիքը լիովին ընդունում է իւր զեկուցման մէջ 18 մայիսի 1877 թւականի ուղղած Լոնդոնի ֆիլոլոգիական Ընկերութեան, և հէնց նորերումս, արեւելեան լեզուների պրոֆեսորը Գոտտինգենի համալսարանում ալ. դը Լագարդ ¹⁾; Goettingische gelehrte Anzeigen թերթում առ 16 ապր. 1887 թ. ամենաշոգորթ զովեստն էր արել պ. Օգիւստ Կարրիէրի մասին, որը Պարիզի Արեւելեան լեզուների դպրոցի պրոֆեսոր է: Եւ վերջապէս բաւական է ձեռքն առնել Արձանագրութիւնների և գրականութեան Ակադեմիայի (Պարիզում) հրատարակած «Ժողովածու խաչակրաց պատմագիրների՝ հայկական լեկումենտներ» (Recueil des historiens des croisades: Documents arméniens), համոզւելու համար թէ որքան լուրջ են հայկական ուսումնասիրութիւնները Ֆրանսիայում: Այդ գեղեցիկ աշխատութեան հրատարակիչը, հանգուցեալ Մ. Լ. Դիւլլորիէ, ծրագրել է այդ ուսումնասիրութիւնների պատմութիւնը 1867 թւականին Պարիզում կայացած Աշխարհանդէսի առիթով. բայց այդ զեկուցումը այլ ևս չը պէտք է մատչելի լինի, քանի որ նա մինչև անգամ չը կայ Բրիտանական թանգարանի դրադարանում: Պր. Կարրիէրը Mélanges Orientaux հրատարակութեան մէջ որ հրատարակում է Արեւելեան լեզուների դպրոցը (Ecole des langues orientales), մեզ տալիս է ոչ պակաս թանկագին մանրամասնութիւններ: Վերջապէս մենք օգուտ քաղեցինք այն զեկուցումներից որ արել են Պարիզի Ասիական Ընկերութեան քարոտղարները՝ Ժիւլ

¹⁾ Մեր առաջին լօղածում ալդ դիտնականին սխալմամբ համարել էինք աստուածաբանութեան պրոֆեսոր, մինչդեռ նա արեւելեան լեզուների պրոֆեսոր է:

Մոհչլ, էրնեստ Ռլնան, Ջեմս Դարմետտեր և գերմանական արևելա-
լագիտական Ընկերութեան քարտուղարները:

I

ՋՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՈՂՈՐԱԲԵՆՈՒԹՅԱՆ

Մենք արդէն առաջին յօդաճում խօսեցինք Արևելիսն կենդանի
լեզուների մասնագիտական դպրոցի մասին, որ հիմնեց Դաշնակցու-
թիւնը ¹⁾ շնորհիւ Լուի-Մատթէոս Լանզլէ (1763—1824 թ.)
գիտնական հայրենասէրի ջանքերին: Մենք նորա պատմութիւնը կը
ներկայացնենք որքան նա հայերէնին է վերաբերում: Առաջին դասըն-
թացը բացւեց 1796-ին, բայց միայն 1798 թ. դեկտեմբերի 11-ին
կարողացան յայտարարել թէ՛ Չիրբիէդ ²⁾ ազգով հայ, կը տայ իւր
մայրնի լեզուի գասերը: Ուսուցիչը՝ Յակոբ Շահան Զրպետեան ծնւեց
Նդեսսայում 1772 թւականին և Հոռվում հոգևորական ասպարէզ-
էր ընտրել: 1792-ին նա եկաւ Պարիզ, ուր նա երկու տւեց հոգե-
րորականութեան քաղաքացիական սահմանադրութեան և պսակւեց
մի Ֆրանսուհու հետ: Դժբաղդարար նա բաւականաչափ չը գիտէր
Ֆրանսերէն որ աշակերտները նորան հասկանային, այնպէս որ գա-
սերը ընդհատւեցին 1801 թւականին:

Զրպետեանը սակայն չը վհատւեց, այլ այն տոկունութեամբ որ
յատուկ է հայկական բնաւորութեան, նա սկսեց ուսանել Ֆրանսիա-
կան լեզուն: 1806-ին աշխատակցութեամբ Յ. Մարտէնի (որ չը պէտք
է խառնել Սէն-Մարտէնի հետ) նա հրատարակեց մի այլանդակ և
անարժէք Ֆրանսերէն գիրք, խորագրւած՝ Հետազոտութիւններ Ասիայի
հին պատմութեան մասին ³⁾, և 1810 թ. դեկտեմբերի 10-ին նա թոյլ-
տուութիւն ստացաւ աւժամանակ նորից բացել իւր կուրսը: Նորա-
այն ժամանակեայ աշակերտներից մէկը, գոքտոր Բելլօ (Bellaut),

¹⁾ Այսպէս էր կոչուում այն լեզափոխական կառավարութիւնը որ
իշխեց Ֆրանսիայում սկսած 1792 թ. սեպտ. 21-ից մինչ 1795 թ. հոկ-
տեմբերի 26-ը, Ծանօթ. խմբ.

²⁾ Չիրբիէդ (Cirbied)—Զրպետեանի խալաքրած անունն է:

³⁾ Recherches sur l'histoire ancienne de l'Asie.

հեղինակ մի «Փորձի հայոց լեզուի մասին» (Essai sur la langue arménienne ¹⁾), Պարիզ 1812), որ յետոյ իրան նւիրեց եկեղեցական կոչման, մեղ տեղեկացնում է թէ Զրպետեանը սկսեց իւր դասատուութիւնը 1811 թ. փետրւարի 5-ին մօտ քսան աշակերտներով, որոնցից միայն հինգը շարունակեցին, բայց նոցա մէջ ինքը Բելլօ և Յովհաննէս-Անտոն Սէն-Մարտէն (Jean Antoine Saint-Martin, 1791—1832), սկէկը նորագոյն գիտնականութեան փառքերից և զլուրը ֆրանսիական հայկաբաններին ²⁾: 1812 թ.-ին հայերէնի ամբիօնը վերջնականապէս հաստատուեց կայսերական դեկրետով արւած Մոսկւայում ³⁾: Զրպետեանը նոյն այդ թւականին հրատարակեց ֆրանսերէն լեզուով «Տեղեկութիւն հայերէն երկու ձեռագիրների մասին (№ 95 և 99 կայսերական Գրադարանի), որ բովանդակում են Մատթէոս երէցի պատմութիւնը և քաղաածք այդ պատմութիւնից վերաբերեալ խաչակրաց առաջին արշաւանքի, հայերէն և ֆրանսերէն, Պարիզ, in 4^o: Այդ հրատարակութիւնը հարազատ չէ, որովհետև Զրպետեանը աշխատել էր հեղինակի բնագիրը ուղղել և անգամ նորա ոճը գեղեցկացնել: 1813-ին լոյս տեսաւ նորա «Ընդհանուր պատկեր Հայաստանի (Tableau général de l'Arménie) և 1816-ին «Խորհուրդներ ուսաց կայսերութեան հարաւային նահանգների հայերին՝ խոտային բամբակի մասին»: 1818-ին նա հայերէն մասով աշխատակցեց այս հրատարակութեան՝ «Տեղեկութիւն Պարսկաստանի ներկայ դրութեան մասին, պարսկերէն, հայերէն և ֆրանսերէն, Միր Դաւուտ Մասուրի, Լանզլէ'ի և Զրպետի» ⁴⁾: 1820-ին Ֆրանսիայի Հնագիտական Ընկերութեան Յիշատակարանի համար ⁵⁾ (հատոր II, երես 262—311) նա գրեց մի յօդած հին հայերի կառավարութեան և կրօնի մասին:

¹⁾ Դա մի տարրական գիրք է և պարունակում է մի կարճատև քերականութիւն, ընտիր հատւածներ և մի բառգիրք:

²⁾ Այս խօսքերը վերկտոր Լանդուա'ինն են:

³⁾ Նապոլէօն I կայսրը ալն ժամանակ մղում էր իւր արշաւանքը Ռուսիայի դէմ և դառնում էր Մոսկւայում: Մանօթ. խմբ.

⁴⁾ Notice sur l'état actuel de la Perse, en persan, arménien et français, par Myr Davoud Zadour, Langlès et Cirbied⁴.

⁵⁾ Mémoires de la Société des Antiquaires de France.

Մինչ այդ ժամանակ ֆրանսիացիների համար չը կար հայոց քերականութեան մի ձեռնարկ: Դպրոցի կանոնների համաձայն՝ պրոֆեսորը պէտք է ինքը մի այդպիսին կազմէր և հրատարակել տար: Դեռ ևս 1806-ին իւր վերոյիշեալ «հետազոտութիւնների» մէջ նա յայտարարել էր թէ իւր քերականութիւնը վերջացրած է և որ բառարանը շատ առաջացած է. բայց նա միշտ բառականում էր իւր քերականութիւնը թելադրել իւր աշակերտներին և տառանում էր այն հրատարակել: Մինչ այդ՝ Պասկալ Օշէ (Aucher) մի այդպիսին հրատարակեց անգլիերէն լեզուով Լորդ Բայրոնի ¹⁾ ծախքով, որը աջակցեց անգամ մի քանի թարգմանութիւններով (Վենետիկ, 1817, 1819, 1832, 1883): Այլ ևս ուշացնել չէր կարելի, և Զրպետեանը վճռեց այն հրատարակել 1823-ին: Այս հաստ և անմարսելի աշխատութիւնը, ինչպէս նկատում է պ. Կարրիէրը, լիքն է սխալներով: Բարեբաղդաբար լուրջ էտիւզների համար, այդ սխալները շուտով ցոյց տրուեցին, որովհետև հայերէնը այն ժամանակ շատ լաւ ծանաչում էին Ֆրանսիացում: Ուն-Մարտէնը հրատարակել էր իւր Յիշատակարանները Հայաստանի մասին ²⁾ (1818—1819) և Շեզի'ի (Chézy) և Սթել Ռէմսէզ'ի (Rémusat) հետ նոր հիմնել էր (1822-ին) Ասիական Բնիկութիւնը ³⁾, որի հրատարակած թերթը այդ օրից դէս այնքան նպաստել է լոյս սփռելու Արևելքի մասին: Այդ ժամանակ Պարիզում էր Կ. Պոլսեցի մի հայ՝ գիտնական վարդապետ Յովհաննէս Զոհրաբեան (1760—1829), որի աշխատութիւնների մասին այստեղ պատշաճ է յիշատակել: 1791-ին նա մի գիտնական ծանապարհորդութիւն արաւ Լեհաստանում, ուր փախստական հայեր կային, և յաջողել էր Լէօպոլում (Լեմբերգ, Լյուով) մի հին ձեռագիր գտնել, 1296 թ.-ին գրած, որ պարունակում էր Ֆիլոն Հրէայի տասներեք դրածքները հայերէն թարգմանած, որոնցից իննը յունական բնադրում կորած էին: Շուտով նա տեղեկացաւ մի ուրիշ ձեռագրի մասին Կ. Պոլսի հայոց պատրիարքի գրադարանում. այդ ձե-

¹⁾ Հռչակաւոր անգլիացի բանաստեղծ, մէկը զարուս տխուհական հանձարներից, ծնւ. 1788 և մեռաւ 1824 թ. (Ռուսաստանի անկախութեան պատերազմում. Խանօթ. Խմբ.

²⁾ Mémoires sur l'Arménie.

³⁾ Société Asiatique.

ռազրով նա կարողացաւ լեհական ձեռագրի պակասորդները և սխալները լրացնել և ուղղել: Նա դորանից մի պատճէն վերցրեց Սուրբ Ղազարի Մխիթարեան միաբանութեան համար, իսկ մի երկրորդն էլ՝ իւր համար: 1816 թւին նա այդ գիւտի մասին ծանօթացրեց Անջելօ Մաի'ի (Angelo Mai) գրած քի միջոցով, խորագրած՝ „De Philonis Judaei scriptis novem ineditis“.

1796-ին Զոհրաբեանը հրատարակեց սուրբ Ղազարբաւ Մովսէս Խսրենացու ծարտասանութեան ձեռնարկը թանկադին ծանօթութիւններով հանդերձ: Այս ձեռնարկի մասին մենք յետոյ կը խօսենք Ադոլֆ Բաումգարտների աշխատութիւնների աւիթով: Զոհրաբեանը աշխատեց նաև Մխիթարեանների բաւարանի վերայ: 1749 թւի հրատարակութիւնը ձեռնարկել էր Մխիթար Սեբաստացին, որը նորա խմբագրութիւնը յանձնեց իւր աշակերտներին, ի միջի այլոց Մկրտիչ Անանեանին: Առաջին հատորը լոյս տեսաւ 1749-ին, հրկրորդը հրատարակեց միայն 1769-ին: Եւստով գտան այդ հրատարակութեան սխալները և թերութիւնները, և երեք գիտնականների յանձնեց նորան բարեփոխել: Դոքա էին Գաբրիէլ Աւետիբեան, որ հեղինակ էր մի պատուական հայոց քերականութեան, Խաչատուր Սուրմելեան և Յովհաննէս Զոհրաբեան: Այս աշխատակիցները պէտք է բոլոր յայտնի ձեռագրերը կարդային և նոյանից քաղածքներ դուրս բերէին: Աշխատեցին 1784-ից մինչ 1790, երբ Ֆրանսիական յեղափոխութեան պատերազմները խանդարեցին գործի շարունակութիւնը: Ֆրանսիական արշաւանքի հէնց սկզբից՝ Բոնապարտը ուզեց փակել սուրբ Ղազարը, որպէս վանական մի հիմնարկութիւն: Զոհրաբեանը գնաց Միլան նորան առարկելու որ այդ մի վանք չէ բառիս բուն մտքով, և կոնսուլը համաձայնեց թողնել որ գոյութիւն ունենայ „Academia armena di Venezia“ (Վենետիկի Հայկական Ակադեմիա) անունով:

Զոհրաբը նաև խմբագրեց սուրբ Ղազարի գրադարանի գրացուցակը և 1805-ին Վենետիկում նա տպել տւեց Հին և նոր Կառնկարանի կարճառօտ պատմութիւնը աշխարհիկ լեզուով: Նրկու տաբուր երկու մեծաքանակ տպագրութիւն էլ երևաց 1874-ին: Յայտնի է որ Աստուածաշունչը թարգմանեց հայերէն Վ-րդ դարու սկզբում Սահակ կաթողիկոսի և գիտնական Մեսրոբի ձեռքով, որին վերագրում է հայոց տառերի գիւտը: Այդ թարգմանութիւնը հիմնաւ

էր «Եօթանասունքի» բնագիրներէից մէկի վերայ, որ փոխ էր տւած Կ. Պոլսի պատրիարք Մաքսիմիանուսը: 1666 թւին Ոսկան Կալիս-կոպոսը լոյս ընծայեց Աստուածաշունչի այդ հայերէն թարգմանութեան առաջին տպագրութիւնը Ամստերդամում, բայց նա մէջ մոցրեց նաև իւր սեպհական թարգմանւածները, որ հիմնւած էին Վուլգատայի ¹⁾ վերայ: Զրնայած դորան այդ հրատարակութիւնը վերատպեց 1705-ին Կ. Պոլսում և 1733-ին՝ Վենետիկում: Զոհրաբեանը 1805-ին առաջինը հրատարակեց նորա քննադատական տպագրութիւնը, հիմնւած 1319 թւականի մի ձեռագրի և բազմաթիւ ուրիշ ձեռագիրների վարիանտների վերայ: Նա, հիմնելով բազմաթիւ աստղանշանների վերայ, ցոյց տւեց, որ հայերէն թարգմանութիւնը կատարւած է ըստ Որիգենէսի Hexapla-ի: Ընդհանուր յաւաքարանները քննադատութեան իսկական օրինակներ են: Զոհրաբեանը աւելցրեց մի քանի ապօկրիֆ զրբեր և մտադիր էր դուռնէի աւելցնել: Այս նոր յաւելածի ձեռագիրը դրոշմում է Պարիզում, և պ. Կարրիէրը (Carrière) նորանից մի քաղւածք հրատարակեց Nouveaux Mélanges Orientaux հրատարակութեան մէջ 1886 թ.: Դա՝ Յովսէփ գեղեցկի և Ասանէթի պատմութիւնն է: Ասանէթը Ոնի քահանայ Պոտիֆերայի աղջիկն է, որ Փարաւոնը կնութեան տւեց Յովսէփին: Փարաւոնի որդին ուզում է փախցնել Յովսէփից, բայց նա խառնուում է և յետ դառնում:

1816-ին Զոհրաբեանը Սուրբ-Ղազարում լոյս ընծայեց հայոց հին այբբենարանի օրինակներ: 1818-ին նա հրատարակեց Անջելօ Մալիի հետ Եւգենիոսի Ժամանակագրութեան հայերէն ձեռագիրը (Միլան, in-4), որի մասին Սէն-Մարտէնը ասում է թէ այդ մի կատարեալ ընդօրինակութիւն է ձեռագրի ²⁾: Հրատարակիչը յետոյ այդ ձեռագիրը նւիրեց Ասիական Ընկերութեան (Պարիզում): Հռչակաւոր Զիօկամօ Լէօպարդի (Leopardi) աւելի ուշ հրապարակեց իւր «Annottazioni» (Ժանօթութիւններ), հիմնւած Վատիկանի № 154 ձեռագրի վերայ (1823): Նոյն տարին, 1818-ին, երբ Զոհրաբեանը այն

¹⁾ Վուլգատայ—Աստուածաշունչի լատին թարգմանութիւնն է.

Մանօթ խմբ.

²⁾ Journal des Savants, 1819.

հրատարակեց, հայր Ժ. Բ. Օչերը (Aucher) նորանից մի երկրորդը հրատարակեց, հիմնելով Սուրբ-Ղազարի ձեռագրի վերայ, և Զոհրաբեանին մեղադրեցին որ չի հետևել ակադեմիայի կանոններին հրատարակելով իւր ձեռագիրը: Այդ հակաճառութեան մասին, որ պատմել է Ժ. Հ. Պետերման, կարելի է կարդալ Շեօնէի (Schœne) հրատարակած Եւգերիոսի մէջ իւր լատիներէն թարգմանութեան ձեռնարկին (1876): Զոհրաբեանի լատիներէն թարգմանութիւնը վերաուսկեց յունաց եկեղեցու հայերի մի ժողովածուի մէջ (Collection Migne des Pères de l'église grecque) Սնեցու Սամուէլ թարգմանութեան հետ:

Այն ժամանակ երբ լոյս տեսաւ Զրպետեանի քերականութիւնը, Զոհրաբեանը ձեռնարկեց թարգմանել նոր կտակարանը աշխարհիկ լեզուով Լոնդոնի Իրլիական Ընկերութեան համար, որը ուզում էր այն տպագրել Պարիզում՝ թարգմանչի աշքերի տակ ¹⁾: Journal asiatique թերթի խմբագրական յանձնաժողովը ինչպէս Զոհրաբեանին որ մի զեկուցում անէ Զրպետեանի քերականութեան մասին: Նորա քննադատութեան տոնի մասին կարելի է գաղափար կազմել այս տողերից՝

«Այս չը գիտեմ թէ ալս տարօրինակ դոքտորը որ ալնքան համեստութեամբ խորհուրդներ է տալիս, երբ և իցէ դպրոցում եղել է. չամուսնալն դէպս նա պատիւ չի բերում իւր վարժապետին. նա աւելի լաւ կ'անէր ալնտեղ վերադառնար, քան ուրիշներին դասեր տար... Նա ալնպիսի սխալներ է անում որ լստին աշակերտն էլ չի անիլ. գրեթէ երես չը կա ուր չը դտնենք բարբարիզմներ և կամ չիճծու ոճեր և ալլն»:

Զրպետեանը բարձր ձայներ արձակեց և պատասխանեց 40 երեսանի մի բրոշիւրով (Հերքումն մի քննադատութեան, զետեղւած Journal asiatique թերթի 12-րդ տետրում, վերաբերեալ պ. Զրպետեանի մի քերականութեան, Պարիզ, 1823.), որ թերթը մերժել էր իւր մէջ ընդունել յօդւածի չափազանց երկարութեան պատճառով: Զրպետեանը այդ մասին դառնազին զանգատեց և մեղադրեց իւր աշակերտ Սէն Մարտէնին. վերջինս պատասխանեց թէ ինքը անմեղ է և որ ինքը շուտով պէտք է զեկուցում տայ Journal des Savants թերթին, բայց որ Journal asiatique չի թոյլ տալիս վայր

¹⁾ Նա լոյս տեսաւ 1825-ին:

ի վերոյ քննադատութիւններ և որ նորա սրտին մօտը՝ սխալմունքների ջրւելն է և ճշմարտութեան յաղթել տալը: Զոհրաբեանը իւր կողմից պատասխանեց Journal asiatique թերթում 1828 թւի (հատոր III, երես 170—190) և բազմաթիւ քաղաքներով ապացուցեց որ Զրպետեանը մեծաքանակ սխալներ է արել: Այսպէս նա յանդիմանեց նրան որ կառ խօսքը կառք խօսքի հետ շփոթում է, քանի որ առաջինը փշալից տերևով մի տունն է (chardon), նաև թէ բարբարոս մակբայներ է կազմում, որպէս՝ հրապարակաբար փոխանակ ասելու հրապարակաւ և այլն:

Զրպետեանը զժբաղդութիւն ունեցաւ առաջարկել իւր բրոշիւրը Ժիւլ Կլապրոթին (Klaproth ¹) մի նամակով առ 19 օգոստոսի 1823 թ., որի մէջ նա ասում էր որ իրան ծանր է թւում տեսնել նորան ընկերացած այդքան չարամիտ ընկերների հետ: Կլապրոթ, որ շատ քնքոյշներիցը չէր, պատասխանեց թէ ինքը ընդհակառակը շատ բաղդաւոր է զգում որ անձամբ ընկերացել է այդքան նշանաւոր գիտնականների հետ և թէ ինքը հիացած է որ երբեմն երբեմն առիթ է ներկայանում տգիտութեան երեսից դիմակը հանել և անհիմն հաւակնութիւնները իրանց ճիշդ արժէքին վերածել: Նա աւելացրեց որ Զրպետեանի նախկին աշխատութիւնները այնպէս չէին որ մեծ հաւատ ներշնչել տային: Վե՛ճ զարմանալի թւեց որ մի մարդ, որ իրան բերականագէտ է համարում, չը զիտէ իւր սեպհական անունը Ֆրանսերէն գրել, որովհետեւ Cirbied ամենևին փոխադրութիւնը չէ Զրպետի (Dchrbied ²): Դուք կը ստանաք այս նամակը տպագրւած, որպէս զի նորան մամուլին յանձնելու նեղութիւնը չը քաշէք»:

Այդ արգէն վերջին հարւածն էր: Զրպետեանը այլ ևս երկար չը մնաց Պարիզում: 1824-ին նա դեռ հրատարակեց Mémoires de la Société royale des antiquaires de France, այսինքն՝ Փրանսիայի հնութիւնների թագաւորական Անկերութեան Յիշատակարան-

¹) Արևելագէտ, ծնւեց 1783 թ., մեռաւ 1835 թ. Եանօթ. խմբ.

²) Ինչու Կլապրոթը չէր մտածում որ Զրպետեանը ոչ թէ սղխաութիւնից ալ միտքն եւրոպացու ակաճջին աւելի դիւրալի դարձնելու համար իւր ազգանունը Cirbied (Ֆրանսերէն արտասանութեամբ Սիրբիէ) էր գրում.

Եանօթ. խմբ.

ների մէջ Դոնիսիոս Թրակեցու քերականութիւնը, իսկու բերած Գրադարանի հայերէն երկու ձեռագիրներից (համարներ 127 և 124)¹⁾։ 1826-ին նա պահանջեց արձակուրդ երեք տարով Թիֆլիս ուղեւորելու համար, ու Ներսէս արքեպիսկոպոսը նորան խնդրել էր կազմակերպել մի յատուկ գպրոց եւրոպական լեզուների համար։ Նա այդտեղ էլ մեռաւ 1834-ին²⁾։

Ինչ վերաբերում է Զահրաբեանին, նա դեռ օգնեց Սէն-Մարտէնին՝ Վարդանի ընտիր առակների հրատարակութեան մէջ ֆրանսերէն թարգմանութեամբ Ասիական Ընկերութեան համար, և 1828-ին նոյն Ընկերութեան համար նա հրատարակեց Ներսէս Կապեցու էլեգիան՝ վերաբերեալ Նդեսսա քաղաքի նւաճմանը սարացիներից 1143 թւին (ձեռագիր n^o 80 Գրադարանի)։ Նա աշխատակցեց նաև Մովսէս Խորենացու հրատարակութեան (Սուրբ Ղազար, 1826 թ. 3)։ Նա մեռաւ 1829 թ. մայիսի 8-ին Վերսալում, կուսկելով Ասիական Ընկերութեան 500 ֆրանկի գումարը, որ այն ժամանակաւ մինիստր

¹⁾ Պր. Գուստաւ Ուհլիգ (Uhlig), Հաղեւորագրի գլխնաղի վերատեսուչը, հրատարակեց 1883-ին Դոնիսիոս Թրակեցու քերականութիւնը քննադատութիւնով հանդերձ՝ *Dionysii Thracis ars grammatica edidit G. Uhlig praemissae Adalberti Merxii de versione armeniaca disputatio*, Lipsiae, 1883։ Մերքսը իւր ուսումնասիրութիւնը արել է Սուրբ-Ղազարում։ Նորա գիտերտացիան բռնում է երես LVII մինչ LXXIII.

²⁾ Պր. Գէորգ Չմշկեանի մի լողածում, տպւած «Մուրճ», 1889 թ. № 1, երես 134 Յակոբ Շահան Զրպետեանի մահւան տարին և օրը ցոյց է տրւած 1833 թ. օգոստոսի 16։ Նոյն ալի լողածում, որ նւիրւած է պր. Գաբրիէլ Սունդուկեանցի կենսագրութեան, սկզբի երկու երեսներում (երես 133 և 134) վիշտակութիւններ կան Զրպետեանի մասին՝ վերաբերեալ Թիֆլիսում նորա անցկացրած տարիներին, որոնց մասին պրոֆ. Շումապֆը ակնարկում է։ Պր. Չմշկեանի այն տողերից երեւում է, որ Զրպետեանը հրաւիրւած էր Թիֆլիս Ներսէս Աշտարակցու կողմից, սորա արքեպիսկոպոս եղած ժամանակ, Ներսիսեան դպրոցը հիմնելուց լատիւ։ Զրպետեանը և իւր ֆրանսուհի կինը, ծննդեամբ Denise Marguerite Wolantum բնակւում էին քաղաքի Անչսխատ կողմած թաղում Սունդուկեանների տանը։ Նորա մօտ է սկսում ուսել և կրթւել մանուկ Գաբրիէլ Սունդուկեանցը, սկսած 1832 թ-ից։

Մանօթ. Խմբ.

³⁾ Հռչակաւոր ֆրանսիական պետական մարդ և պատմաբան, ծնւ. 1787, մեռաւ 1875 թ.

Մանօթ. Խմբ.

Հանգուցեալ Գիզօ (Guizot¹⁾) թոյլ տւեց ընդունել այս պայմանով որ նորա գերեզմանի վերայ արձանագրութիւն անել Ֆրանսերէն և հայերէն լեզուներով: Journal Asiatique թերթում 1835 թ. (հատոր XV, երես 572—576) Եւգենիոս Բորէ (Eugène Boré) խօսում է նորա մասին այս կերպ. «Այստեղ տեղն է երախտիք յայտնել զոքար Զոհրաբի յիշատակին, որը խորասուզւել էր իւր ազգի լեզւի և նորա գիտութեան մէջ և շնորհակալութիւն յայտնել յանուն այն երիտասարդ հայագէտների, որոնց թիւը Ֆրանսիայում միշտ աճում է: Այս գիտնականը մէկն է նոցանից, որոնք ամենից շատ են ծառայել հայոց գրականութեան: Նորա բոլոր աշխատութիւնները կրում են իսկական և խղճմտալի գիտնականութեան կնիքը:»

Մենք հարկաւոր համարեցինք մանրամասնօրէն պատմել Զրպետեանի և Զոհրաբեանի կիւր, որովհետեւ այդ բանակուից մեծ մասամբ բղխեց այն լոյսը, որը այդ ժամանակից դէս չի դադարել լուսաւորել հայկաբանութիւնը: Ֆրանսիայում:

Մենք կը վերջացնենք մեր յօդածը Ֆրանսիայի նկատմամբ՝ խօսելով Զրպետեանի յետնորդների մասին, որոնք են՝ Լըւայլան զը Ֆլորիւալ, Է. Դիւլլորիէ և պ. Կարրիէր, որպէս նաև Սէն-Մարտէն, Էւարիստ Պիլիգհօմ, Եւգենիոս Բորէ, Բրոսսէ, Վիկտոր Լոնգլուա և այլն:

Յետոյ մենք կ'անցնենք ուրիշ երկիրներ՝ Գերմանիա, Աւստրիա, Ռուսիա, Իտալիա, Բելգիա, առանց մոռանալու ամերիկական միսիօնարների աշխատութիւնները:

¹⁾ Նոր հրատարակութիւն 1880 թ-ին: Տես նաև Մովսէս Խորենացու լիակատար շարադրութիւնները, Ս. Ղալար, 1842 և 1864.